ellips

Սելեկտիվ անցումային համակարգի նկարագրություն

Սելեկտիվ անցումային համակարգը նախատեսված է աշխատակիցների և այցելուների շարժը վերահսկելու համար:

Համակարգն աշխատում է ավտոնոմ տարբերակով, ինչն ապահովում է համակարգի աշխատանքը նաև համակարգչի հետ կապի խափանման դեպքում: Այդ ընթացքում կատարվում է նաև բոլոր գործողությունների ավտոնոմ արխիվացում, հետագայում կապի վերականգնման հետ՝ ողջ արխիվացված ինֆորմացիայի թարմացում: Սրանով ապահովվում է համակարգի ինֆորմացիայի անկորուստ պահպանում:

Ավտոնոմ համակարգն ապահովում է լիարժեք վերահսկողություն՝

- քարտի համապատասխանության
- քարտի վավերականության ժամկետի
- գրաֆիկով շարժի սահմանափակման
- կրկին մուտք ու ելքի (եթե նման սահմանափակում նախատեսված է)
- իրավունքների (կոնկրետ անցակետերում թույլատրված աշխատակիցների շարժ)
- կոնկրետ անցակետերի շարժի արգելափակման՝
  - գրաֆիկով թույլատրելի ժամանակահատվածում
  - նշված աշխատակիցների շարժ այդ ժամանակահատվածում

Ծրագրին մի քանի ավտոնոմ համակարգի միացում ցանցային տարբերակով՝

- Ինչը հնարավորություն է տալիս ցանցի առկայության դեպքում ստեղծել կենտրոնացված համակարգ՝ անկախ անցակետերի կենտրոնից ունեցած հեռավորության, օրինակ մարզերում:

- Համակարգը աշխատում է SQL պահոցով (բազա) որն ապահովում է ինֆորմացիայի մեծ ծավալի արխիվացում, և անկախ դրանից՝ արխիվացված ինֆորմացիայի արագ արտաբերում:

Աշխատակիցների տվյալների խմբավորում ըստ՝

- բաժինների
- ենթաբաժինների
- պաշտոնների
- կարգերի
- աշխատաժամերի գրաֆիկների
- իրավունքների /անցակետերով շարժ/
- ժամանակավոր արգելքների
- համակարգից օգտվելու ժամանակահատվածի

Ինֆորմացիայի դիտում՝

- **հիմնական**
  - ցուցակ /աշխատակիցներ, այցելուներ/
  - շարժ /աշխատակիցներ, այցելուներ/
  - շարժ տարածքում /աշխատակիցներ, այցելուներ/
  - տարածքում գտնվողների ցուցակ /աշխատակիցներ, այցելուներ/

- **լրացուցիչ /նախնական պայմանավորվածությամբ/**
  - ուշացումներ
  - բացականեր
  - աշխատավայրում գտնվելու ժամանակահատված և աշխատաժամ
  - աշխատակիցների աշխատած, ուշացած, բացակայած օրերի և ժամերի հաշվարկ

Համակարգում մուտքային տվյալների փոփոխման իրավունք տրվում է միայն մեկ օգտվողի, մյուսներին կարող է տրվել միայն դիտման հնարավորություն: